Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ՀԱՄԿԿ (Բ) ԲՋԻՋՆ ՈՒ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

(ՊՈՒԽՌ-ի նոր հրահանգը)

КП5
Z-22

ՅԵՐԵՎԱՆ
1929

17.09.2013

25 SEP 2006

1 DEC 2000

# ՀԱՄԿԿ (Բ) ԲՋԻՋՆ ՈՒ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

## ՀՐԱՀԱՆԳ ՀԱՄԿԿ(Բ)Կ·ԲԱՆԱԿԻ ԲՋԻՋՆԵՐԻՆ ՅԵՎ Կ. ԲԱՆԱԿՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՀԱՄԼԿՅԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԲ. ԳԻՎ· ՔԱՂԲԱԺՆԻ ԽՄԲԱԳՐ··ՀՐԱՏ· ՄԱՍ

ՅԵՐԵՎԱՆ 1929

12775-17

# ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

## ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

5-ն նոյեմբերի, 1928 թ. ք. Մոսկվա

№ 22

Այսու հայտարարվում է անշեղ ղեկավարության համար ՀամԿԿ(բ) Կենտկոմի կողմից հաստատված՝ «Հրահանգ ՀամԿԿ(բ) Կարմիր բանակի բջիջներին»։

Սույն «Հրահանգը» կազմված է կուսկազմակերպությունների վերջին տարիների աշխատանքի փորձառության բազմակողմանի հաշվառման հիման վրա, որն իր արտահայտությունն է գտել կուսակցական-քաղաքական աշխատանքի մի շարք ղեկավար փաստաթղթերում և բջիջների քարտուղարների համաբանակային 2-րդ խորհրդակցության որոշումներում։



«Հրահանգը» որոշում է բջիջների, գնդային կոլեկտիվների ու նրանց ղեկավար մարմինների խնդիրները զորամասում կատարած աշխատանքի բոլոր կարևորագույն բնագավառներում։ Հրահանգում իր լրիվ արտահայտությունն է գտել ԲԳԿԲ կուսքաղմարմինների առաջ հիմնական խնդիրը, այն է՝ «բջիջի ակտիվացումը՝ վաշտում տարվող ամբողջ աշխատանքը բազմակողմանիորեն իր ազդեցությամբ ընդգրկելու գործում (քաղ-բարոյական դրություն, մարտական պատրաստություն, քաղպարապմունքներ, արտադպրոցական աշխատանք, հասարակական կազմակերպություններ, տնտեսություն ու կենցաղ)»։

«Հրահանգն» առանձնապես ուժեղ կերպով շեշտում է, որ կուսկազմակերպությունները իրենց աշխատանքում պետք է զարգացնեն բարձր օրինակելիություն, նախաձեռնություն, գործարար ինքնաքննադատություն ու պատասխանատվություն և վճռապես կռվեն զորամասերի կյանքում ու

9265

կենցաղում նկատվող բացասական յերևույթների ու բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ:

«Հրահանգը» պետք է խիստ մանրազնին կերպով ուսումնասիրվի և յուրացվի կուսակցության բոլոր անդամների ու թեկնածուների կողմից:

ԲԳԿԲ Քաղաքական Վարչության

Պետ՝ Ա. ԲՈՒԲՆՈՎ

---



Հաստատված է Համ ԿԿ (բ) Կենտկոմի
Քարտուղար՝ Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ
Բ.Գ.Կ.Բ. Ք.Վ. Պետ՝ Ա. ԲՈՒԲՆՈՎ

# ՀՐԱՀԱՆԳ
# ՀԱՄԿԿ (Բ) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԲՋԻՋՆԵՐԻՆ

1-ն նոյեմբերի 1928 թ.

(խաղաղ ժամանակվա համար)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Կուսակցական աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը կարմիր բանակում ու նավատորմում իրագործվում է ԲԳԿԲ Քաղաքական Վարչության կողմից, վորը հանդիսանում է Կենտկոմի ռազմական բաժինը: Իր ղեկավարությունը ՊՈՒՌ-ն իրագործում է իր նշանակած քաղբաժինների (ճակատների, շրջանների, նավատորմների, բանակների, դիվիզիաների քաղբաժիններ), ռազմկոմների և համապատասխան բանակային կոնֆերանսներում ընտրվող կուսակցական հանձ-

նաժողովների միջոցով (ՀամԿԿ(բ) կանոնադրքից § 78)։

2. Քաղբաժինները պարտավոր են սերտ կապ պահպանել տեղական կուսակցական կոմիտեների հետ, որի համար տեղական կուսակցական կոմիտեներում շարունակ մասնակցում են քաղմարմինների ղեկավարներն ու ռազմկոմները, և սիստեմատիկաբար ունկնդրվում են կուսկոմիտեներում քաղմարմինների պետերի ու ռազմկոմների զեկուցումները՝ զորամասերում կատարած քաղաշխատանքի մասին (կուսակցության կանոնադրքից § 82)։

3. Կարմիր բանակում ՀամԿԿ(բ) կառուցվածքի առանձնահատկությունները, որ բխում են հենց Կարմիր բանակի կազմակերպության յուրահատուկ բնույթից, հետևյալն են.—

ա) Կարմիր բանակի ու նավատորմի կուսակցական կազմակերպություններում ղեկավար մարմինների ընտրողականությունը գոյություն ունի միայն ստորին բջիջների



(վաշտի բջիջ, գնդի կոլեկտիվ) և կուսակցական հանձնաժողովների համար. իսկ մընացած ամբողջ կուսակցական ապարատը, որը միաժամանակ նաև վարչական-քաղաքական ապարատ է հանդիսանում, նշանակվում է վերից.

բ) Որևէ զորական միավորություն սպասարկող կազմակերպություն վերադաս կազմակերպություն է համարվում տվյալ զորական միավորության կազմի մեջ մտնող բոլոր զորամասերի կազմակերպությունների նկատմամբ, անկախ զորամասերի յերկրային տեղավորման։

4. Զորամասերում, հիմնարկներում, ձեռնարկություններում, կադրային, յերկրային հրաձգային ու հեծելազորային դիվիզիաներում և առանձին բրիգադներում, ինչպես նաև Կարմիր բանակի ռազմակրթական հիմնարկներում և այն զորամասերում որ չեն մտնում դիվիզիաների ու բրիգադների կազմի մեջ, ԲԳԿԲ ռազմածովային ուժերում, ՀամԿԿ(բ) բջիջների անմիջական

ղեկավարությունը պատկանում է համապատասխան քաղբաժիններին ու քաղվարչություններին։

Քաղբաժինների ու քաղաքական վարչությունների գլուխ են կանգնած սահմանված կարգով նշանակված պետերը։

5. Ռազմական կոմիսարները, միահրամատար-կուսհրամատարները և քաղմասի ոգնականները հանդիսանում են համապատասխան զորական միավորությունների ՀամԿԿ(բ) բոլոր կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները։

6. Կարմիր բանակի բջիջներում կուսակցության անդամների ու թեկնածուների ընդունելության ու հեռացման, ինչպես նաև ՀամԿԿ(բ) անդամների ու թեկնածուների կուսզանցանքների քննարկման հետ կապված հարցերի լուծումը պատկանում է կուսակցական հանձնաժողովներին, վորոնք ընտրվում են համապատասխան (շրջանային, դիվիզիական և նրանց համազոր) կուսակցական կոնֆերանսներում՝ կոնֆերանսների



գումարումների միջև յեղած ժամկետների համար։

7. Շրջանների քաղվարչությունները, դիվիզիաների քաղբաժինները (և նրանց համազոր քաղմարմինները) համակուսակցական հարցերի և Կարմիր բանակի ու նավատորմի կուսակցական-քաղաքական աշխատանքի և ռազմական շինարարության հարցերի քննարկման համար հրավիրում են կուսակցական կոնֆերանսներ, վորոնք քննարկում են քաղմարմինների ու համապատասխան հրամատարների զեկուցումները, կուսակցական հանձնաժողովների հաշվետվությունները և ընտրում են կուսակցական հանձնաժողովներ։ Դիվիզիական ու շրջանային կուսկոնֆերանսները հրավիրվում են վոչ սակավ՝ քան տարին մեկ անգամ։

Ծանոթություն. Մարտական պարագայի պայմաններում կուսկոնֆերանսները հրավիրվում են վերադաս քաղմարմնի ու կոմիսարի թույլտվությամբ։

8. Ռազմական կոմիսարը, միահրամա-

տար–կուսհրամատարը և հրամատարի քաղմասի օգնականը, հանդիսանալով վերադաս կուսակցական մարմնի ներկայացուցիչները, իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են նրանց մասին՝ ՀամԿԿ(բ) Կենտկոմի կողմից հաստատված կանոնադրությամբ:

Ծանոթություն. Կրկնությունից խուսափելու համար հետագա §§–ում բաց է թողնված «համազոր» դարձվածքը: Այդպիսով, երբ գրվում է միայն «վաշտային», «դիվիզիական», «գնդային», պետք է նկատի ունենալ նաև նրանց համազոր զորամասը, հիմնարկը և այլն:

## II. ԲՋԻՋԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

9. Կարմիր բանակի ու նավատորմի զորամասերում, հիմնարկներում, ձեռնարկություններում և կրթական հիմնարկներում հիմնական կուսակցական կազմակերպությունը հանդիսանում է վաշտային, հեծելավաշտային, մարտկոցային ու նավային



բջիջը, վոր կազմակերպվում է, երբ կա ՀամԿԿ(բ) առնվազն 3 անդամ:

10. ՀամԿԿ(բ) յուրաքանչյուր անդամ ու թեկնածու Կարմիր բանակում պարտավոր է լինել այն զորամասի, հիմնարկի կամ կրթական հիմնարկի բջիջի անդամը, վորտեղ նա համարվում է, վորպես զորական պաշտոնյա:

Ծանոթություն. Այնպիսի զորամասերում (հիմնարկներում) գտնվող կոմունիստներն ու թեկնածուները, վորտեղ բջիջներ չկան, համապատասխան քաղմարմնի կարգադրությամբ ամրացվում են այլ զորամասերի բջիջներին:

11. Բջիջ կազմակերպելու համար զորամասի կոմիսարը (քաղմասի օգնականը) կամ կոմիսարի (քաղմասի օգնականի) հանձնարարությամբ ՀամԿԿ(բ) անդամներից մեկը հայտարարում է կազմակերպչական ժողով գումարելու մասին, վորին հրավիրվում են տվյալ վաշտի կազմից կուսակցության բոլոր անդամներն ու թեկնածուները:

12. Առաջին կազմակերպչական ժողովը

նպատակ ունի ստուգելու ժողովականների կուսակցական պատկանելիությունը և ընտրում է 3 անդամից բաղկացած ժամանակավոր բյուրո:

Ծանոթություն. Յերբ զորամասում ՀամԿԿ(բ) անդամների թիվը 7-ից պակաս է, ընտրվում է ժամանակավոր քարտուղար:

13. Կազմակերպչական ժողովն անց է կացնում կոմիսարը (քաղմասի ոգնականը) կամ նրա կողմից այդ նպատակի համար լիազորված՝ կուսակցության անդամը: Ժողովի արձանագրությունում հիշատակվում են ժողովականների անուններն ու ազգանունները և անվիճելի կուսփաստաթղթերը: Ժողովի ղեկավարը ներկայացնում է արձանագրությունը զորամասի կոմիսարի (քաղմասի ոգնականի) միջոցով համապատասխան քաղմարմնին՝ ի հաստատություն:

Ծանոթություն 1. Գնդային կոլլեկտիվի բյուրո լինելու դեպքում՝ վաշտային բջիջների կազմակերպմանը մասնա-



կից է դարձնում գնդային բյուրոյի քարտուղարին:

Ծանոթություն 2. Մինչև հաստատումը կազմակերպվող բջիջը կարող է գումարել իր դռնփակ ժողովները, սակայն իրավունք չունի հանդես գալու կուսակցության անունից:

14. Բջիջի հաստատվելուց հետո ընդհանուր ժողովն ընտրում է բջիջի նախագահություն կամ քարտուղար:

15. Բջիջն ու գնդային կոլլեկտիվի բյուրոն չունեն իրենց կնիքը և հարկ յեղած դեպքում ոգտվում են զորամասի կոմիսարի (քաղմասի ոգնականի) միջոցով իրենց զորամասի կնիքով:

16. Բջիջների ցրումն ու կազմալուծումը կատարվում է համապատասխան քաղմարմինների կարգադրությամբ:

Ծանոթություն. Մարտական պարագայում, այն դեպքում յերբ բջիջն այնպիսի գործողություններ է ցուցաբերում, վորոնք խանգարում են մարտա-

կան օպերացիաների կատարմանը, բջիջը կարող է ցրվել անմիջորեն ռազմական կոմիսարի (քաղմասի օգնականի) կողմից: Նման դեպքում առաջին իսկ հնարավորության միջոցին կոմիսարը (քաղմասի օգնականը) պատճառաբանված բացատրություն է ներկայացնում ցրման պատճառների մասին՝ համապատասխան քաղբաժնին:

17. Կուսակցության նորեկ անդամներին ու թեկնածուներին բջիջի մեջ մտցնելը կատարվում է, երբ նրանք գալիս են զորամաս, և կատարվում է նրանց կուսակցական ու գործուղման փաստաթղթերով: Կուսփաստաթղթերի մեջ անկանոնություն լինելու դեպքում, հարցը լուծում է կուսհանձնաժողովը:

18. Քաղմարմինները կուսակցական ուժերով լավագույն ձևով սպասարկելու համար զորամասերին և աշխատողներով ուժեղացնելու համար ամենից թույլ բջիջներին, կարող են փոխադրել կուսակ-



ցության անդամներին մի բջիջից՝ մյուսը:

19. Ցերկրային զորամասերում փոփոխական կազմից կուսակցության անդամներն ու թեկնածուները հավաքների միջոցին մտնում են իրենց զորամասերի բջիջների կազմի մեջ:

## III. ՎԱՇՏԱՅԻՆ ԲՋԻՋԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

20. Վաշտային բջիջի հիմնական խնդիրները հանդիսանում են.

ա) ակտիվ մասնակցությունը համակուսակցական կյանքին և զորամասի կուսակցական աշխատանքին.

բ) վերադաս կուսակցական ինստանցիաների բոլոր վորոշումների, դիրեկտիվների ու կարգադրությունների ժամանակին կիրառումը.

գ) իր անդամների քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացման վերաբերյալ աշխատանքն ու ակտիվ կուսաշխատողների նոր կադրերի դաստիարակությունը.

դ) կուսակցության անդամների ու թեկնածուների դաստիարակությունը բոլշևիկյան կուսակցական կարգապահության ոգով և պայքարն այդ կարգապահության խախտումների դեմ՝ կուսակցության առանձին անդամների կողմից.

ե) աջակցությունը հրամանատարական ու քաղաքական կազմին՝ զորամասի հաստատուն քաղբարոյական դրություն, անսասան զորական կարգապահություն ձեռք բերելու, ինչպես նաև զորամասի տնտեսական, կուլտուր-կենցաղային կյանքի, կարմիր բանակայինների ռազմական ու քաղաքական ուսուցման բարելավման համար.

զ) կուսակցության ազդեցության ու ղեկավարության ամրացումն անկուսակցական կարմիր բանակայինների ու պետկազմի միջև, սերտ կապ հաստատելով բջիջի և անկուսակցականների մեջ, մասսաների մեջ կիրառելով կուսակցական լոզունգներն ու վորոշումները և սիստեմա-



119

տիկ աշխատանք տանելով անկուսակցականների մեջ.

է) նոր անդամների ներգրավումը կուսակցության մեջ.

ը) կուսակցության աջակցող՝ կոմերիտական խմբակի աշխատանքի ղեկավարությունը.

թ) մշտական ու սերտ կապ պահելը տեղական կուսկազմակերպությունների հետ.

ժ) ակտիվ մասնակցությունը տեղական բնակչության մեջ ռազմական պրոպագանդի կիրառման գործում:

21. Բացի § 20-ում. հիշատակվածից յերկրային զորամասերի ստորին բջիջները միջհավաքային շրջաններում պարտավոր են.

ա) սիստեմատիկ կերպով ղեկավարել համալրման շրջանում գտնվող բնակազմի կուսանդամների ու թեկնածուների աշխատանքը.

բ) սերտ կապ պահպանել փոփոխիկ-

12725-57

կուսակցականների և համալրման շրջանների կուսկազմակերպությունների հետ․

գ) աջակցել տեղական կուսակցական, խորհրդային և արհեստակցական կազմակերպություններին՝ փոփոխիկների քաղաքական դաստիարակության գործում։

22․ Իր աշխատանքի առավելագույն հաջողությունն ապահովելու նպատակով՝ բջիջը պետք է այդ աշխատանքը տանի որոշ ծրագրով, որը կազմվում է մի որոշ ժամանակամիջոցի համար, համակուսակցական որոշումների, քաղմարմինների դիրեկտիվների և կոլլեկտիվի բյուրոյի ցուցումների հիման վրա և խնամքով հաշվի առնելով իր զորամասի աշխատանքի դրությունն ու պայմանները։

23․ Բջիջի անդամներին կուսակցական ակտիվ աշխատանքի մեջ քաշելու և նրանց հանձնարարված կուսակցական պատվերների կատարումը վերստուգելու նպատակով՝ բջիջը․—

ա) պահում է իր անդամների մանրա-



զնին որակական ու քանակական հաշվառումը․

բ) բաշխում է կուսակցական պարտականությունները կուսակցության բոլոր անդամների ու թեկնածուների միջև․

գ) լսում է առանձին անդամների հաշվետվությունները՝ նրանց կողմից կուսակցական հանձնարարություններ կատարելու մասին։

Կուսակցական պարտականություններ բաշխելիս՝ բջիջը ձգտում է, որպեսզի յուրաքանչյուր ընկեր հնարավորություն ունենա ինքնազարգացման միջոցով բարձրացնելու իր քաղաքական և ընդհանուր գիտելիքների մակարդակը։

24․ Բջիջը․—ա) քննարկում է իր ժողովներում համակուսակցական ու համաքաղաքական կյանքի հարցերը, կուսակցական ու տնտեսական այն հարցերը, որ դրված են տեղական քաղաքացիական կազմակերպությունների առաջ, ինչպես նաև իր

զորամասի շինարարության ու կենցաղի հարցերը․

բ) միջոցներ է ձեռք առնում ամրացնելու համար բջիջի անդամների շարքերում կուսակարգապահությունը, ակտիվությունն ու ընկերական զոդումը։

գ) կռվում է կուսակցության անդամների և անկուսակցականների մեջ նկատվող բոլոր հիվանդագին յերևույթների դեմ (հարբեցողություն, ավելորդություններ, խառնակչություն, զինվորական կարգապահության խախտումներ, բյուրոկրատական խեղաթյուրումներ և այլն)․

դ) աջակցում է գնդային բյուրոյին կուս-լուսավորության դպրոցների կազմակերպման գործում և հրահրում է իր անդամներին անցնելու այդ դպրոցների դասընթացը։

ե) աջակցում է կուսակցական ինքնակրթության զարգացմանը․

զ) դրդում է իր անդամներին կանոնավոր կերպով բաժանորդագրվելու և կար-



դալու թերթեր, թղթակցելու այդ թերթերին և մասնակցելու զորամասի պատի լրագրին․

25․ Բջիջի ամբողջ աշխատանքը կառուցվում է գործարար ինքնաքննադատության հիման վրա, որն (ինքնաքննադատությունը) ամեն կերպ օգտագործվում է կռվելու համար բանակի շարքերում յեղած բյուրոկրատական խեղաթյուրումների ու կազյոնշչինայի դեմ, հայտաբերելով ու վերացնելով կոմիսարի, քաղմասի օգնականի կամ կուսակցական պետկազմի միջոցով բացասական յերևույթները զորամասի քաղբարոյական դրության բնագավառում և նյութական-կենցաղային կարգի հարցերում։

26․ Զորամասի շինարարությունն ու մարտական պատրաստությանն ակտիվ մասնակցելու գործում բջիջը՝

ա) խստիվ հսկում է, վորպեսզի բջիջի անդամներն օրինակելիորեն կատարեն ի-

րենց պարտականությունները, որպես զորական պաշտոնյաներ·

բ) Նպաստում է կոմունիստների կատարելագործմանը ռազմական գործում և նրանց կողմից անհրաժեշտ մարտական հատկություններ ձեռք բերելուն·

գ) օգտագործում է մարտավարական պարապմունքների ու մանյովրաների փորձը, նպատակ ունենալով, որ կուսակցական անդամները ձեռք բերեն պատերազմի ժամանակվա կուսակցական և քաղաշխատանքի սովորքներ·

դ) կարմիր բանակայինների մեջ զարգացնում է հետաքրքրություն դեպի ռազմական ուսուցումը·

ե) օգնություն է ցույց տալիս կարմիր բանակայիններին ռազմական գիտելիքների յուրացման գործում, դաստիարակելով նրանց մեջ մարտական հատկություններ՝ նախաձեռնություն, համարձակություն, վճռականություն և վստահություն դեպի իր



ուժերն ու դեպի կարմիր բանակի մարտական կորովը·

զ) օգնում է քաղղեկին՝ կազմակերպելու և անցկացնելու քաղպարապմունքներ, միջոցներ ձեռք առնելով բարելավելու նրանց բովանդակությունը և նրանց որակի համար պատասխանատվության զգացմունք դաստիարակելով քաղպարապմունքները տանելու կանչված բոլոր կուսակցականների կողմից·

է) իրազեկ է դարձնում քաղղեկին ու կոմիսարին (քաղմասի օգնականին) վաշտի քաղաքական ու տնտեսական դրության մասին, իր կողմից աջակցելով ձեռք առած միջոցներով, հայտաբերած թերությունների վերացմանը:

27· Անկուսակցականների միջև տարած աշխատանքի բնագավառում բջիջը՝

ա) պարտավորեցնում է իր անդամներին շարունակ ամենասերտ մերձեցում և շփում ունենալ կարմիր բանակային մասսայի հետ·

բ) բացատրում է անկուսակցականներին խորհրդային իշխանության ու կուսակցության՝ թե՛ յերկրում և թե՛ բանակում վարած քաղաքականության ընթացիկ հարցերը.

գ) զննում է լենանկյունների աշխատանքի ծրագիրը, առաջ է քաշում լենանկյան բաժինների ղեկավարներ, ակտիվ մասնակցում է նրա ամբողջ աշխատանքին.

դ) իրագործում է իր զորամասի հասարակական, ինքնագործոն կարմիր բանակային կազմակերպությունների գործունեության ղեկավարությունը՝ այդ կազմակերպությունների աշխատանքին մասնակցող՝ բջիջի անդամների միջոցով, ձգտելով ընդարձակելու յուրաքանչյուր կազմակերպության ինքնագործունեությունն ու նախաձեռնությունը և ուղղելով այդ ինքնագործունեությունը դեպի զորամասի մարտունակության ամրացման կողմը.

ե) հասարակական ինքնագործոն կազմակերպությունների մեջ է քաշում անկու-



սակցականներին, աշխատում է այնպես անել, վոր նրանց ղեկավար մարմինները պարբերաբար հաշվետվություններ տան և ժամանակին, սահմանված ժամկետներում կատարվեն վերընտրությունները, ձգտելով նրանց մեջ ամեն անգամ գրավել նոր առաջքաշվողներ՝ ամենաակտիվ կարմիր բանակայիններից.

զ) անկուսակցականներին ներգրավում է բջիջի դռնբաց ժողովներին.

է) կազմակերպում է և անց է կացնում անհատական ու խմբակային աշխատանք.

ը) ակտիվ մասնակցություն է ցույց տալիս զորամասի ժողովի պատրաստությանն ու անցկացմանը.

թ) նախապատրաստական աշխատանք է կատարում կարմիր բանակային կոնֆերանսների համար, ղեկավարում է պատգամավորների ընտրությունը և կազմակերպում է պատգամավորների հաշվետվություններ՝ կոնֆերանսների վորոշումների վերաբերյալ.

ժ) սիստեմատիկ աշխատանք է կատարում հայտաբերելու և դաստիարակելու համար կարմիր բանակային ակտիվ և համախմբելու նրան կուսակցության շուրջը.

ժա) օգնում է կարմիր բանակայիններին քաղաքական գիտելիքների յուրացման գործում.

ժբ) ղեկավարում է վաշտի պատի թերթը, իր անդամների կողմից նշանակում է պատի թերթի խմբագիր և համախմբում է վաշտի զինթղթակիցներին նրանց կողմից ընտրվող խմբկոլի շուրջը: Կուսակցության անդամներին ու թեկնածուներին ակտիվ մասնակից դարձնելով պատի թերթի գործունեությանը, բջիջը թերթում լուսաբանում է կուսակցության և իր կազմակերպության կյանքը:

28. Կոմյերիտական աջակցող խմբակի աշխատանքի ղեկավարությունն իրագործելու բնագավառում բջիջը՝

ա) յերբ վաշտում կա ՀամԼԿՅԵՄ առնվազն 5 անդամ, ՀամԼԿՅԵՄ բյուրոյի հետ



միասին կազմակերպում է կոմյերիտական աջակցող խմբակ, վորն աշխատում է «Կարմիր բանակի՝ ՀամԼԿՅԵՄ աշխատանքի կանոնադրության» հիման վրա. իսկ ռազմակրթական հիմնարկներում կազմակերպում է ՀամԼԿՅԵՄ բջիջ.

բ) նախագահությունների նիստերում և ընդհանուր ժողովում լսում է կոմյերիտական աջակցող խմբակի կազմակերպչի զեկուցումները և վորոշում է խմբակի աշխատանքի հիմնական խնդիրները զորամասում.

գ) նպաստում է կոմյերիտականների զարգացման և ինքնագործունեության զարգացմանը, կոմյերիտականների խմբակների միջոցով նրանց մասնակից դարձնելով հասարակական և ինքնագործու կազմակերպություններին.

դ) հսկում է աջակցության խմբակի միջոցով, վորպեսզի կոմյերիտականներն օրինակելի կարմիր բանակայիններ լինեն.

ե) պարտավորեցնում է կոմյերիտմիու-

թյան մեջ գտնվող կուսակցականներին ու թեկնածուներին ակտիվ մասնակցելու աջակցող խմբակի աշխատանքին.

զ) հետևում է, վորպեսզի կոմյերիտականները ներգրավվեն միութենական ու կուսակցական լուսավորության դպրոցների մեջ.

է) ոգնություն է ցույց տալիս կոմյերիտական աջակցող խմբակի աշխատանքին (կուսակցականների ամրացումն աջակցող խմբակին, զեկուցողներ ջոկելը կոմյերիտական ժողովների համար և այլն).

ը) կոմյերիտականներին ներգրավում է կուսակցական դռնբաց ժողովներին:

## IV. ՎԱՇՏԱՅԻՆ ԲՋԻՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

29. Վաշտային բջիջի բարձրագույն ղեկավար մարմինը հանդիսանում է նրա անդամների ընդհանուր ժողովը:



30. Վաշտային բջիջների ընդհանուր ժողովները հրավիրվում են պարբերաբար, վոչ սակավ քան՝ ամիսը յերկու անգամ:

31. Ընդհանուր ժողովն որինական է համարվում, յերբ ներկա յե տվյալ բջիջի կուսակցության առկա անդամների առնվազն կեսը:

Ծանոթություն.— Պաշտոնեական պարագայից առաջացած բացառիկ դեպքերում (յերկրային զորամասերում բջիջի անդամների շրջագայությունները դեպի համալրման շրջանը, մարտական պարագան, պահակներ և այլն) ընդհանուր ժողովն որինական է համարվում, յերբ ներկա յե տվյալ բջիջի անդամների մի յերրորդ մասը:

32. Մարտական պարագայում կոմիսարի հայեցողությամբ բջիջի ընդհանուր ժողովի գումարումը կարող է հետաձգվել:

33. Ժողովի ժամանակ, վայրն ու կարգը հայտարարում է նախագահությունը բջիջի

բոլոր անդամներին վոչ ուշ, քան ժողովից յերկու որ առաջ։

34․ Բջիջի յուրաքանչյուր ժողով վարելու համար բջիջի կազմից ընտրվում է նախագահություն կամ նախագահ ու քարտուղար, վորը վարում է նիստի արձանագրությունը։ Բոլոր հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ։

35․ Անկուսակցականների միջև մասսայականացնելու համար կուսակցության խընդիրներն ու դերը, ինչպես նաև նրանց համախմբելու համար բջիջի շուրջը, դռնփակ ժողովների հետ միասին բջիջը կազմակերպում է դռնբաց կուսժողովներ։

36․ Վաշտային բջիջի ընդհանուր ժողովը․

ա) քննարկվում է ամբողջ կուսակցության առաջ դրած հարցերը․

բ) քննարկում է քաղաքական, կուսակցական, ինչպես նաև իր զորամասի չինարարության ու կենցաղի հարցերը․

գ) լսում է տեղական կուսմարմինների



ու խորհրդային մարմինների ֆրակցիաների զեկուցումները․

դ) հաստատում է իր աշխատանքի ծրագիրը, լսում է ու քննարկում բջիջի նախագահության հաշվետվությունները․

ե) լսում է ու քննարկում կուսհրամատարների ու քաղղեկների զեկուցումները՝ վաշտի կյանքի և աշխատանքի մասին, գնդի բյուրոյի զեկուցումները և կուսակցության այն անդամների հաշվետվությունները, վորոնք աշխատում են հասարակական և ինքնագործոն կազմակերպություններում․

զ) լսում է և քննարկում կոմյերիտական աջակցող խմբակի կազմակերպչի զեկուցումները․

է) քննում է կուսակցության թեկնածու ընդունվելու և թեկնածուից անդամ փոխադրվելու ցանկության մասին տված դիմումները․

ը) քննարկում է բջիջի անդամներին կուսակցական տույժի յենթարկելու կամ կուսակցությունից հեռացնելու հարցը։

## V. ՎԱՇՏԱՅԻՆ ԲՋԻՋԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

37. *Աշխատանքի առօրյա ղեկավարության համար վաշտային բջիջի անդամների ընդհանուր ժողովն ընտրում է նախագահություն՝* 6 *ամիս ժամկետով:*

38. *Երբ բջիջում կա կուսակցության* 7 *և ավելի անդամ նախագահության կազմի մեջ ընտրվում են* 3 *անդամ և* 2 *թեկնածու: Երբ բջիջում կա կուսակցության* 30 *անդամից ու թեկնածուից ավելի, նախագահության կազմի մեջ ընտրվում են* 5 *անդամ և* 2 *թեկնածու։*

Ծանոթություն 1.—*Այն բջիջը, որն ունի կուսակցության* 7 *անդամից պակաս, նախագահության փոխարեն ընտրում է միայն մի քարտուղար:*

Ծանոթություն 2.—*Բջիջի նախագահության անդամ կարող են ընտրվել միայն ՀամԿԿ (բ) անդամները:*

39. *Կյանքում կիրառելու համար նախագահության և ընդհանուր ժողովի որո-*



*շումները և լուծելու համար աշխատանքի բոլոր անհետաձգելի ընթացիկ հարցերը, նախագահությունն իր կազմից ընտրում է վաշտային բջիջի քարտուղար:*

Ծանոթություն.—*Բջիջի քարտուղարի տեղափոխությունը կամ նրան յերկարատև գործուղման նշանակելը, թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, համաձայնեցնելով ռազմական կոմիսարի (քաղմասի օգնականի) և գնդային կոլեկտիվի բյուրոյի հետ:*

40. *Վաշտային բջիջի քարտուղարի համար պարտադիր է առնվազն միամյա կուսակցական ստաժ:*

Ծանոթություն.—*Պակաս կուսակցական ստաժ ունեցող քարտուղարի ընտրությունները թույլատրվում են միայն համապատասխան քաղբաժնի կողմից:*

41. *Նախագահությունը հաշվետու յե իր գործունեության համար բջիջի ընդհանուր*

ժողովի առաջ՝ առնվազն յերեք ամիսը մեկ անգամ։

42. Բջիջի աշխատանքի ղեկավարության գործնական առօրյա մասնակցություն ցույց տալու համար, նախագահության անդամները բաշխում են իրար միջև բջիջի գործունեության առանձին ճյուղերի ղեկավարության պարտականությունները։

43. Վաշտային բջիջի նախագահության պարտականությունների մեջ մտնում է հետևյալը.

ա) ղեկավարել և հսկել, որ կյանքում կիրառվեն վերադաս կուսինստանցիաների և բջիջի ընդհանուր ժողովների վորոշումները՝ բջիջի բոլոր անդամների կողմից.

բ) մշակել բջիջի աշխատանքի ծրագիրը, ներկայացնել այդ ծրագիրը ի հաստատություն ընդհանուր ժողովին և հսկել նրա կատարմանը.

գ) բաշխել կուսառաջադրություններ բջիջի բոլոր անդամների միջև և ստուգել այդ առաջադրությունների կատարումը.



դ) նախապատրաստել և հրավիրել բջիջի անդամների ընդհանուր ժողովներ.

ե) սիստեմատիկաբար իրազեկել գնդային բյուրոյին՝ բջիջի աշխատանքի ու կազմի մասին։

44. Բջիջի քարտուղարը վարում է բջիջի գրագրությունը, կազմում է կատարած աշխատանքի հաշվետվությունը և պատրաստում է բջիջի նախագահության նիստի հարցերը։

45. Բջիջի քարտուղարը պարտավոր է ճանաչել անձամբ իր բջիջի բոլոր անդամներին առանձին-առանձին և նրանցից յուրաքանչյուրի ընդունակության աստիճանը՝ այս կամ աշխատանք կատարելու վերաբերյալ։

46. Այն դեպքերում, յերբ վաշտը ցրված է լինում մեծ տեղամասում, վորի հետևանքով զգալիորեն դժվարանում է անընդհատ կապն առանձին կոմունիստների և վերջիններիս կողմից բջիջի քարտուղարի միջև, բջիջի նախագահությունը կամ քարտուղարը ջոկում են մի վորոշ ժամկետի համար յու-

րաքանչյուր առանձին գործող շարային ըստորաբաժանման կազմի մեջ մի կուսկազմակերպիչ՝ ստորաբաժանման մեջ գտնվող կոմունիստներից:

## VI. ԳՆԴԱՅԻՆ ԿՈԼԼԵԿՏԻՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

47. Վաշտային բջիջները համախմբվում են ու կազմում գնդային ու նրան համազոր կոլլեկտիվ:

48. Վաշտային բջիջի համար § § 20—28-ում մատնանշած խնդիրների հետ միասին, գնդային կոլլեկտիվը.—

ա) ղեկավարում է վաշտային բջիջների ամբողջ գործունեյությունը.

բ) հաստատում է վաշտային բջիջների աշխատանքի պլանը.

գ) աշխատանք է տանում կուսլուսավորության վերաբերյալ, կազմակերպելով կուսխմբակներ, քաղգրագիտության խմբակներ, պարբերաբար կազմակերպելով անդամների քաղպարապմունքների ստուգումներ և ղեկավարելով նրանց ինքնակրթությունը.



դ) կատարում է դիվիզիական ու շրջանային կուսկոնֆերանսների նախապատրաստությունը (քննարկում է օրակարգի հարցերը, ընտրում է պատգամավորներ).

ե) անկուսակցականների միջև տարած աշխատանքի բնագավառում ուսումնասիրում է տրամադրությունները, զորամասի ամբողջ կազմի քաղբարոյական դրությունը, ակտիվ մասնակցություն է ցույց տալիս ժողովներ ու կարմիր բանակային կոնֆերանսներ կազմակերպելու գործում, առաջադրում է այդտեղ իր կողմից հարցեր, ակտիվ մասնակցելու յե գրավում կոմունիստներին ու կոմյերիտականներին, կազմակերպում է խմբակային և անհատական աշխատանք, զորամասի հասարակական և քաղլուսավորական կազմակերպություններում աշխատող իր անդամների միջոցով, իրագործում է իր ղեկավարությունն այդ կազմակերպություններում.

զ) ղեկավարում է տեղական խորհուրդների վերընտրական կամպանիան կարմիր

բանակայինների մեջ, առաջ է քաշում, որպես խորհուրդների թեկնածուներ, առաջավոր աշխատողներին, գլխավորապես ամենաակտիվ կարմիր բանակայիններից, կազմակերպում է պատգամավորների սիստեմատիկ հաշվետվություններ, ընտրողների համար՝ թե՛ անհատապես պատգամավորների և թե՛ ամբողջ խորհրդի կատարած աշխատանքների մասին. դրա համար, որպես զեկուցողներ, ներգրավվում են թե՛ տվյալ զորամասից ընտրված խորհրդի պատգամավորներին և թե՛ խորհրդի պատասխանատու աշխատողներին (խորհուրդների նախագահներ, բաժինների վարիչներ և այլն).

է) աշխատանք է կատարում ամեն կերպ ՀամԿԿ (բ) բջիջների շուրջը համախմբելու կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակներին, պարբերաբար լսում է իր ժողովներում և քննարկում գնդի կոմյերիտական խմբակի կազմակերպչի զեկուցումները.

ը) տեղական կուսկազմակերպության կյանքին հաղորդակից լինելու, վերջինիս ա-



ջակցելու իր առօրյա աշխատանքում և կարմիր բանակայիններին մոտեցնելու համար բանվորական կազմակերպություններին,— սերտ կապ է պահպանում կուսակցության տեղական կոմիտեների և առանձին արտադրական բջիջների հետ՝ տեղական կոմիտեների ու քաղմարմնի ցուցումներով.

թ) զորամասի քաղաքական, հրամանատարական կազմին ցույց տված աջակցության բնագավառում լսում է կարմիր բանակային ինքնագործոն կազմակերպություններում աշխատող իր անդամների ինֆորմացիոն հաշվետվությունները, մտցնում է այդ առթիվ իր առաջարկները և հաղորդում է այդ համապատասխան ինստանցիաներին:

## VII. ԳՆԴԱՅԻՆ ԿՈԼԼԵԿՏԻՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

49. Գնդային կոլլեկտիվի ընդհանուր ժողովները հրավիրվում են պարբերաբար ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

50. Գնդային կոլլեկտիվի ժողովի հրավիրման կարգն ու աշխատանքը սահմանվում է համաձայն § § 31—35-ի:

51. Գնդային կոլլեկտիվի ընդհանուր ժողովը բացի § 36-ում հիշատակվածից.

ա) հաստատում է գնդում տարվող աշխատանքի պլանները, որ ներկայացնում է կոլլեկտիվի բյուրոն.

բ) քննարկում է այն բոլոր համակուսակցական հարցերը, որ առաջ են քաշում կենտկոմն ու տեղական կուս. կազմակերպությունները, ինչպես նաև այն հարցերը, որ տակավին չեն լուծվել կուսակցության կողմից ամբողջապես, և նրանց վերաբերյալ պահանջվում են հասարակական կարծիքի ձևակերպում.

գ) լսում է, քննարկում և հաստատում գնդի կոլլեկտիվի հաշվետվությունները, ինչպես նաև կուսխմբակների, քաղգրագիտության դպրոցների, կուսկազմակերպության՝ զորամասի հասարակական և ինքնագործոն կարմիր բանակային կազմակերպություններում գտնվող ներկայացուցիչների և ակումբի վարչության հաշվետվությունները.



դ) քննում է և հաստատում բյուրոյի յեզրակացությունը՝ ընդունելության և կուսակցությունից հեռանալու, կուսակցության անդամներին ու թեկնածուներին կուստույժերին յենթարկելու հարցերի վերաբերյալ.

ե) ընտրում է սահմանված կարգով կուսկոնֆերանսների պատգամավորներ.

զ) լսում է կուսհանձնաժողովի զեկուցումները նրա կատարած աշխատանքի մասին և ռազմկոմի զեկուցումները զորամասի ընդհանուր դրության մասին.

է) լսում է տեղական կուսմարմինների և խորհրդային մարմինների ֆրակցիաների զեկուցումները:

52. Զորամասի դրության կարևորագույն մոմենտների վերաբերյալ կոլլեկտիվ (և ստորին բջիջների) դռնփակ ժողովներում սիստեմատիկաբար դրվում են զորամասի պետկազմից ղեկավար անձանց զեկուցում-

ները։ Զեկուցումներ գնելու և քննարկելու հետ միաժամանակ կոնկրետ առաջարկներ են արվում կուսկազմակերպության խնդիրների մասին՝ տվյալ զորամասի դրության մեջ նըկատած թերությունների ու բացասական երևույթների վերացման գործում, ինչպես նաև այն միջոցառումների մասին, որ անհրաժեշտ է ձեռք առնել պետկազմի կողմից։

Ծանոթություն.— Զեկուցումների առթիվ արած առաջարկները նախապես մշակվում են գնդային կոլլեկտիվների բյուրոներում, դրան մասնակից դարձնելով զորամասի կուսակցական ակտիվին և վաշտային բջիջների նախագահություններում։

## VIII. ԳՆԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

53. Պատգամավորական ժողովները հըրավիրվում են այն դեպքերում, երբ մարտական պարագայի պայմաններով կամ գընդի վաշտերի ու խմբերի ցրված լինելու պատճառով հնարավոր չի հրավիրել գնդի



բջիջների անդամների ընդհանուր ժողով։ Գնդի բջիջների պատգամավորական ժողովներն ունեն գնդի կուսակցական ընդհանուր ժողովի իրավունքներ ու ֆունկցիաներ։ Պատգամավորներն ընտրվում են վաշտային բջիջների ընդհանուր ժողովներում այնպիսի հաշվով, որ կուսակցության յուրաքանչյուր 3—5 անդամին ընկնի մի պատգամավոր։

Ծանոթություն.—ՀամԿԿ (բ) թեկնածուները պատգամավորական ժողովներում ընտրվել չեն կարող։

54. Գնդի կոլլեկտիվի բյուրոյի անդամները պատգամավորական ժողովում վայելում են վճռական ձայնի իրավունք։

55. Բջիջներից պատգամավորական ժողովների համար ընտրությունները կատարվում են յուրաքանչյուր առանձին պատգամավորական ժողովից առաջ։

## IX. ԳՆԴԱՅԻՆ ԿՈԼԼԵԿՏԻՎԻ ԲՅՈՒՐՈՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

56. Ընթացիկ աշխատանքի ղեկավարության համար գնդային կոլլեկտիվի անդամ-

ների ընդհանուր ժողովը 6 ամիս ժամանակով ընտրում է բյուրո:

Ծանոթություն.— Անհրաժեշտության դեպքում գնդային բյուրոյի թեկնածությունների նախնական քննարկումը կատարվում է գնդի կուսակոմիտեի ժողովում:

57. Յերբ կոլլեկտիվում կա կուսակցության մինչև 100 անդամ ու թեկնածու, բյուրոյի կազմի մեջ ընտրվում է բյուրոյի 5 անդամ և 2 թեկնածու. յերբ անդամների թիվը 100-ից ավելի յե ընտրվում են բյուրոյի 7 անդամ, 3 թեկնածու, 150-ից ավելի անդամների դեպքում՝ 9 անդամ և 4 թեկնածու:

Ծանոթություն.—Յերկրային զորամասերում հավաքների շրջանում բյուրոյի կազմի մեջ լրացուցիչ կերպով ընտրվում են բյուրոյի 2 անդամ, փոփոխիկ-կուսակցականներից:

58. Կյանքում կիրարկելու համար բյուրոյի, կոլլեկտիվի ընդհանուր ժողովի վորոշումները և լուծելու համար բոլոր ընթացիկ



և անհետաձգելի հարցերը, բյուրոն իր կազմից ընտրում է գնդային կոլլեկտիվի պատասխանատու քարտուղար:

59. Գնդային կոլլեկտիվի պատասխանատու քարտուղարի համար պարտադիր է կուսակցական յերկամյա ստաժ:

Ծանոթություն.—Պակաս կուսակցական ստաժ ունեցող քարտուղարի ընտրությունը թույլատրվում է միայն համապատասխան քաղմարմնի միջոցով:

60. Գնդային կոլլեկտիվի պատասխանատու քարտուղարը հաստատվում է համապատասխան քաղմարմնի կողմից: Քաղմարմիններն իրավունք ունեն հաստատելու գնդային բյուրոյի կազմը:

61. Գնդային կոլլեկտիվի բյուրոն.

ա) կյանքում կիրարկում է վերադաս մարմինների և կուսակցական ընդհանուր ժողովների վորոշումները և հետևում է, վորպեսզի այդ վորոշումները կատարեն վաշտային բջիջների նախագահությունները ու բոլոր անդամները:

բ) իրազեկում է կուսակցության անդամներին կուսակցական ու քաղաքական կյանքի կարևորագույն մոմենտների մասին.

գ) ղեկավարում է վաշտային բջիջների նախագահությունների առօրյա գործունեությունը, կազմակերպելով պարբերաբար բյուրոյի ընդլայնած նիստեր և բջիջների քարտուղարների խորհրդակցություններ.

դ) վերադաս կուսմարմինների դիրեկտիվների և տվյալ զորամասի աշխատանքի առանձնահատկությունների հաշվառման հիման վրա մշակում է գնդային կազմակերպության աշխատանքի պլանը, ներկայացնում է այդ պլանն ի քննություն և ի հաստատություն ընդհանուր ժողովին և ղեկավարում է նրա կիրարկումը:

Ծանոթություն.—Աշխատանքի պլանի նախնական մշակմանը գնդային բյուրոն մասնակից է դարձնում վաշտային բջիջների քարտուղարներին:

ե) հաստատում է ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոյի վորոշումները՝ կոմյերիտմիության



շարքերը նոր անդամներ ընդունելու և կոմյերիտմիությունից հեռացնելու վերաբերյալ.

զ) կոլլեկտիվի բյուրոն ջոկում է կազմակերպչական ու ագիտացիոն-պրոպագանդիստական հանձնաժողովներ՝ բյուրոյի անդամների նախագահությամբ, վորպես բյուրոյի օժանդակ մարմիններ, վոր աշխատում են կազմակերպչական և ագիտպրոպագանդիստական հանձնաժողովների կանոնադրությունների հիման վրա.

է) ղեկավարում է գնդային պատի լրագիրը, վորը հանդիսանում է գնդային կոլլեկտիվի օրգանը և զինթղթակցային թերթի խմբագիր:

62. Կոլլեկտիվի բյուրոն հաշվետու յե իր գործունեության համար կոլլեկտիվի ընդհանուր կամ պատգամավորական ժողովի կամ անմիջորեն վաշտային բջիջների առաջ յուրաքանչյուր յերեք ամսում:

63. Զորամասի ակտիվ կուսաշխատողներ պատրաստելու. ավելի լայն չափով

նրանց օգտագործելու համար կուսակցության շարքային անդամների ու թեկնածուների կուսդաստիարակության գործում, մըշակելու համար կուսակցական քաղաքականության հերթական հարցերի վերաբերյալ հասարակական հաստատուն կարծիք և նախնական գործնական քննարկություն ստեղծելու համար կուսկազմակերպության աշխատանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ, կոլեկտիվի բյուրոն պարբերաբար հրավիրում է զորամասի կուսակտիվի խորհրդակցություններ:

Կուսակցական ակտիվի կազմի մեջ, բացի այն ընկերներից, վորոնք մտնում են կուսակցության ղեկավար մարմինների մեջ (բյուրո, նախագահություններ), պետք է մտնեն նաև զորամասերի քաղղեկները, կուսլուսավորության դպրոցների ղեկավարները, ՀամԼԿՅԵՄ խմբակների կազմակերպիչները (կուսակցության անդամ), բյուրոյի ջոկած հանձնաժողովների ղեկավարները և կուսա-



կազմակերպության մեջ ակտիվ աշխատող՝ կուսակցության այլ անդամները:

64. Գնդում տարվող կուսաշխատանքի գործնական առօրյա ղեկավարության համար բյուրոն բաշխում է իր անդամների միջև կուսակցական աշխատանքի առանձին ճյուղերը մոտավորապես հետևյալ ձևով.

ա) քարտուղարը—աշխատանքի բոլոր ճյուղերի ընդհանուր ղեկավարություն. ներկուսակցական դաստիարակության հարցեր.

բ) բյուրոյի անդամներից մեկը—նախագահ կազմակերպչական հանձնաժողովի.

գ) երկրորդ անդամը—նախագահ ագիտպրոպ հանձնաժողովի և նախագահ ակումբի վարչության բյուրոյի.

դ) երրորդ անդամը—անկուսակցականների միջև տարվող աշխատանքի ղեկավարությունն ու ինքնագործոն կարմիր բանակային կազմակերպությունների ղեկավարությունը.

ե) չորրորդ անդամը—ԼԿՅԵՄ աշխատանքի ղեկավարությունը։

Ծանոթություն 1.—Բյուրոյի անդամների ավելի ընդարձակ կազմի դեպքում և այն ժամանակ, յերբ բյուրոյի անդամների թեկնածուներն օգտագործվում են մի վորոշ գործնական աշխատանքում, առանձին անդամներին կարելի յե հանձնարարել ներկայացուցչությունն ակմբի վարչության մեջ, գինթղթակցային աշխատանքի ղեկավարությունը և այլն։

Ծանոթություն 2.—Բյուրոյի անդամների թեկնածուները ներկա յեն լինում բյուրոյի բոլոր նիստերին և օգտագործվում են գնդային բյուրոյի գործնական աշխատանքում։

Ծանոթություն 3.—Յերբ Համ. ԼԿՅԵՄ գնդային կազմակերպիչը գնդի կոլլեկտիվ բյուրոյի անդամ է, այդ դեպքում բյուրոյի հատուկ անդամ չի



նշանակվում ՀամԼԿՅԵՄ աշխատանքի ղեկավարության համար։

63. Գնդային կոլլեկտիվի պատասխանատու քարտուղարի անմիջական պարտականությունների մեջ մտնում է.

ա) առօրյա կապը կոմիսարի (քաղմասի օգնականի) հետ զորամասի կուսաշխատանքի հարցերի վերաբերյալ.

բ) կապ հաստատելը վերադաս քաղմարմնի հետ.

գ) վաշտային բջիջների քարտուղարների աշխատանքի ղեկավարությունը.

դ) գնդային կոլլեկտիվի բյուրոյի ու նրա առանձին անդամների գործունեության համաձայնեցումը ընդհանուր պլանի և քաղմարմինների ու տեղական կուսմարմինների դիրեկտիվների հետ.

ե) կուսակցության բոլոր ակտիվ անդամների հաշվառումը.

զ) հաշվետվություններ կազմելը գնդի կոլլեկտիվի աշխատանքի մասին։

## X. ԳՆԴԱՅԻՆ ԿՈԼԼԵԿՏԻՎԻ ՈՒ ՎԱՇՏԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՍԱՐԻ, ՄԻԱՀՐԱՄԱՏԱՐ-ԿՈՒՍՀՐԱՄԱՏԱՐԻ, ՔԱՂՄԱՍԻ ՈԳՆԱԿԱՆԻ ՈՒ ՔԱՂՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ

66. *Ռազմական կոմիսարը, միահրամատար-կուսհրամատարը և քաղմասի ոգնականը, հանդիսանալով վերադաս կուսակցական մարմնի ներկայացուցիչներ, նրա առաջ պատասխանատվություն են կրում զորամասի կուսակցական կազմակերպության ընդհանուր դրության համար:*

*Կուսկազմակերպության աշխատանքին ցույց տված ռազմկոմի (քաղմասի ոգնականի) անմիջական ղեկավարությունը պետք է արտահայտվի նրանով, որ նա սիստեմատիկաբար առաջադրում է կուսկազմակերպությանը զորամասի կյանքի և աշխատանքի կարևորագույն հարցերը և ակտիվ կերպով բյուրոյի հետ մեկտեղ մասնակցում է բոլոր այդ հարցերի լուծմանը:*



Ծանոթություն.—*Ռազմական կոմիսարի, քաղմասի ոգնականի և միահրամատար-կուսհրամատարի կուսակցական-քաղաքական իրավունքների ու պարտականությունների այդպիսի ռեգլամենտացիա տրված է «Ռազմական կոմիսարի, միահրամատար-կուսհրամատարի և քաղմասի ոգնականի վերաբերյալ կանոնադրության» մեջ:*

67. *Գնդային կոլլեկտիվն ու բջիջը չեն միջամտում ռազմկոմի, միահրամատար-կուսհրամատարի և քաղմասի ոգնականի կարգադրություններին:*

68. *Ռազմկոմի կամ միահրամատար-կուսհրամատարի, կամ քաղմասի ոգնականի և գնդային բյուրոյի միջև տարաձայնություններ ծագելու դեպքում, գնդային բյուրոն կիրարկում է տրված ցուցումները, բայց կարող է հարցերի վերջնական լուծման համար դիմել համապատասխան քաղմարմնին:*

69. *Ռազմկոմի, միահրամատար-կուս-*

հրամատարի և քաղմասի ոգնականի գործողությունների բողոքարկումը կոլեկտիվի բյուրոյի կողմից բարձր ինստանցիային չեն կարող արգելել կամ կասեցնել ռազմկոմը, միահրամատար-կուսհրամատարը և քաղմասի ոգնականը: Բողոքարկումը կարող է միայն մարտական պարագայի պայմաններում հետաձգվել 7 օրից վոչ ավելի ժամկետով:

70. Բջիջի նախագահությունը քաղղեկին մասնակից է դարձնում վաշտի կուսակցական աշխատանքի կազմակերպմանն ու կատարմանը. քաղղեկն իր կողմից իր փորձառությունը հաղորդակից է անում կուսակցության յերիտասարդ անդամներին և ամեն կերպ ոգնում է բջիջի ղեկավար մարմնին:

71. Այն դեպքում, յերբ վորևէ միջադեպ է ծագում բջիջի ու քաղղեկի միջև, հարցը քննարկվում է գնդային բյուրոյում և ռազմկոմի (քաղմասի ոգնականի) կողմից:



## XI. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ

72. Գնդային կոլեկտիվի բյուրոն, բջիջն ու կուսակցության առանձին անդամները պահպանում են և ամրացնում կարմիրները բանակայինների միջև հրամատարական ու վարչական կազմի հեղինակությունը և ամեն կերպ ոգնում են նրան, նրա աշխատանքում՝ վերացնելու համար զորամասի կյանքում և աշխատանքում նկատված թերությունները:

73. Կուսակցական կազմակերպությունը չի միջամտում հրամատարական ու վարչական կազմի կարգադրություններին:

## XII. ԲՋԻՋԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՊԸ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

74. Տեղական կուսկազմակերպությունների հետ սերտ կապ հաստատելու նպատակով զորամասերի (գնդի. առանձին մասի)

կուսկազմակերպությունները ցուցակագրվում են տեղավորման կոմիտեներում ըստ իրենց տեղական վայրի, ներկայացնում են կուսկոմին հանրագումարային տվյալներ իրենց առկա կազմի մասին, ստանալով իր հերթին, տեղական կուսբջիջներին հավասար, նրանց աշխատանքի պլանները, դիրեկտիվներ ու փակ նամակներ։

75. Զորական կուսակցական կազմակերպությունների անդամները պարբերաբար հաճախում են համաքաղաքային շրջանային ժողովներ, մասնակցում են կոնֆերանսներին ու կոմիտեների ընտրություններին։ Պատասխանատու քարտուղարները պարտավոր են հաճախել կուսկոմներին կից հրավիրվող քարտուղարների խորհրդակցությունները։

Կոմիսարը (քաղմասի օգնականը) գնդային կոլլեկտիվի պատասխանատու քարտուղարի հետ միասին պարբերաբար զեկուցում է համապատասխան կուսկոմներում զորամասի կուսկազմակերպության դրության ու նրա աշխատանքի մասին։



76. Զորամասերի բջիջների անդամների օգտագործումը կուսկոմիտեների կողմից կատարվում է յուրաքանչյուր առանձին դեպքում զորամասի ռազմկոմի (քաղմասի օգնականի) համաձայնությամբ։

77. Կուսկոմիտեների կողմից զորամասերի աշխատանքի հետազոտումը կարող է կատարվել, համաձայնեցնելով այդ համապատասխան քաղմարմինների հետ։ Այս կամ այն թերությունների հայտաբերման դեպքում նրանց վերացման համար անհրաժեշտ միջոցները ձեռք են առնվում զորամասի ռազմկոմի (քաղմասի օգնականի) կամ համապատասխան քաղմարմնի միջոցով։

78. Զորական կազմակերպությունների կապը քաղաքացիական կուսբջիջների հետ պետք է ուղղված լինի՝ աշխատանքի փորձի փոխադարձ օգտագործմանը, բջիջների ուժերի փոխադարձ օգտագործմանը, գյուղի վերաբերյալ շեֆական միատեղ աշխատանքին, բանակային աշխատողներին տեղական կուսակցական և խորհրդային աշխատանք-

ների ակտիվ մասնակից դարձնելուն, քաղաքացիական կազմակերպությունների ուշադրությունը ռազմական շինարարության, զորամասի կյանքի ու կենցաղի հարցերին գրավելուն և տեղական կուսկազմակերպության՝ ձեռնարկությունում ռազմական աշխատանք տանելու գործում օգնելուն:

## XIII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԵՌԱՑՈՒՄԸ

79. Ընդունելության ու հեռացման հարցերը, կուսակցության անդամների ու թեկնածուների կուսզանցանքների քննությունը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ. վաշտային բջիջի նախագահություն —վաշտային բջիջի ընդհանուր ժողով, գնդային կոլեկտիվի բյուրո—ընդհանուր կամ պատգամավորական ժողով: Բջիջի կամ գնդային բյուրոյի՝ ընդունելության կամ հեռացման հարցերի վերաբերյալ վորոշման վերջնական հաստատումը պատկանում է համապատասխան կուսհանձնաժողովներին:



Ընդունելության ու հեռացման հարցերի վերաբերյալ վորոշումները մանրամասնորեն արձանագրվում են համապատասխան ժողովի կամ նիստի արձանագրության մեջ:

Ծանոթություն.— Կուսակցության շարքերն ընդունվելու հարցերի քննարկումը տեղի յե ունենում ըստ հնարավորության դռնբաց ժողովներում:

80. Նախքան թեկնածուների ընդունելության դիմումների քննարկումը դիմումներ տվողների անվանացուցակները վաղորոք փակցվում են մի աչքի ընկնող տեղում ընդհանուրի գիտության համար:

81. Տերկրային զորամասերում փոփոխական կազմից կուսակցության մեջ ընդունելություն չի կատարվում:

Տերկրային զորամասերում կուսակցական կազմակերպությունները քննարկում են այն հարցերը, վոր կապված են փոփոխական կազմից կուսակցության անդամների կուսզանցանքների հետ, և հանում են իրենց վո-

րոշումը, իսկ վերջնական վճիռը պատկանում է տեղական կուսկոմներին։

## XIV. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

82. Կուսակցության բոլոր անդամներն ու թեկնածուները վճարում են կուսակցության սահմանած անդամավճարները։ Կուսակցության՝ բանակում գտնվող անդամների համար անդամավճարների բացարձակ թըվերը սահմանվում են ՀամԿԿ(բ) Կենտկոմի և ՊՈՒՌ-ի հրահանգներով։

83. Անդամավճարներն ընդունում է գնդի բջիջների բյուրոն բացառապես վաշտային բջիջների նախագահությունների (քարտուղարների) միջոցով։

84. Անդամավճարների վերահատկացման (раз ассигнование) կարգը և նրանց գանձման տեխնիկան, բջիջի գործավարությունն ու հաշվետվությունը որոշվում է ՊՈՒՌ-ի հատուկ ցուցումներով։



# ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

## ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

10 նոյեմբերի, 1928 թ. № 23. ք. Մոսկվա

Սրանով հայտարարում եմ ՀամԿԿ (բ) ԿԿ և ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի կողմից հաստատված «Կարմիր բանակում տարվող ՀամԼԿՅԵՄ աշխատանքի կանոնադրությունը» անշեղ ղեկավարության համար։

Վերջին տարիների Կարմիր բանակում կոմյերիտմիության աշխատանքի փորձի հիման վրա մշակված նոր «Կանոնադրությունը» տալիս է Բ. Գ. Կարմիր բանակի կոմյերիտմիության կառուցվածքի վերջացրած կազմակերպչական ձևը։

«Կանոնադրությունը» ապահովում է լիակատար հնարավորությունը կոմյերիտմիության ինքնագործունեության, ակտիվության և ինքնաքննադատության զարգացումը՝ Կարմիր բանակի պայմաններում:

Դրա հետ միասին «Կանոնադրությունը» կոմյերիտմիությունն ամրացնում է բանակում, որպես բանակային կուսկազմակերպության ուղղակի օգնականը, որն աշխատում է կուսակցության անմիջական ղեկավարությամբ և որը հանդես է գալիս որպես կուսակցության գլխավոր զենքերից մեկը՝ զորանոցի վրա ազդեցություն անելու գործում:

Նոր «Կանոնադրությունը» պարտավորեցնում է քաղմարմիններին և կուսկազմակերպություններին ուժեղացնել իրենց ղեկավարությունը մաքսիմալ չափով կոմյերիտական աջակցության խմբակների վրա և ուշադրություն դեպի նրանց առօրյա գործնական աշխատանքը Բ. Գ. Կարմիր բանակում:



«Կանոնադրությունը» պետք է խնամքով ուսումնասիրության ենթարկվի ոչ միայն կուսակցական աշխատողների կողմից, այլև ՀամԼԿՑԵՄ բոլոր անդամների և թեկնածուների կողմից:

Բ.Գ.Կ.Բ. Քաղվարչության

պետ՝ Ա. ԲՈՒԲՆՈՎ.

«Հաստատված է» ՀամԿԿ (բ) ԿԿ
Քարտուղար՝ Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ
ՀամԼԿՅԵՄ ԿԿ Քարտուղար՝ Ա. ՄԻԼՉԱԿՈՎ
Բ.Գ.Կ.Բ. Քաղ. Վարչության Պետ՝ Ա. ԲՈՒԲՆՈՎ
1 Նոյեմբերի, 1928 թ.

# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՀԱՄԼԿՅԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Կոմյերիտմիությունը Կարմիր բանակում հանդիսանում է կուսկազմակերպության ուղղակի օգնականը՝ նրա ամբողջ աշխատանքում, կուսակցական ազդեցությունը կարմիր բանակային մասսայի մեջ տարածելու առաջնորդը և կուսակցական կազմակերպության շարքերը լրացնելու հիմնական պահեստն ու աղբյուրը:

Կոմյերիտմիությունը Կարմիր բանակում նպատակ է դնում իր ամբողջ գործունեության ընթացքում ամեն կերպ ուժեղացնել Բ.Գ.Կ.Բ. մարտունակությունը և



ամրացնել կոմյերիտական կուսակցության ղեկավար դերը բանակում:

2. ՀամԼԿՅԵՄ կազմակերպության ամբողջ աշխատանքը պետք է կատարել զորամասերի քաղմարմինների և կուսակցական կազմակերպությունների անմիջական ղեկավարության տակ և այդ աշխատանքը կուսակցական-քաղաքական աշխատանքի մի անբաժանելի մասն է կազմում:

3. Կարմիր բանակի և տորմիղի բոլոր զորամասերում, որպես ՀամԼԿՅԵՄ սկզբնական հիմնական կազմակերպություն, հանդիսանում է վաշտային, հեծելավաշտային, մարտկոցային, նավային և սրանց համանշանակ կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակը:

Ծանոթություն.—ՀամԼԿՅԵՄ աշխատանքն ու կազմակերպությունը Կարմիր բանակի և տորմիղի ռազմա-դպրոցական հաստատություններում որոշվում է հատուկ կանոնադրությամբ:

4. Վաշտային և սրան համանշանակ

կոմյերիտական աջակցության խմբակները գնդում և նրան համանշանակ զորամասում միանում կազմում են կոմյերիտական կուսակցության աջակցող գնդային խմբակ:

5. Վաշտային կուսակցության աջակցող կոմյերիտական խմբակի ամենօրյա գործնական աշխատանքը ղեկավարում է նրա նախագահությունը (կազմակերպիչը), գնդային խմբակի աշխատանքը—ՀամԼԿՅԵՄ գնդի բյուրոն, որոնք ընտրվում են կուսակցության աջակցող կոմյերիտական խմբակների համապատասխան ժողովներում:

6. Ինչպես համամիութենական, նույնպես և Բ.Գ.Կ.Բ. կոմյերիտմիության կատարած աշխատանքի փորձի հաշվառման ու քննադատության համար, դիվիզիաների քաղբաժինները (ու նրանց համանշանակները) և շրջանների (օկրուգ) քաղվարչությունները պետք է տարին մեկ անգամ գումարեն Համ. ԼԿՅԵՄ համապատասխան դիվիզիական և շրջանային կոնֆերանսներ:

7. Միութենական աշխատանքի հարցերը



և քաղմարմինների, կուսակցական կազմակերպությունների ու ԲԳԿԲ զորամասերի կուսակցության աջակցող կոմյերիտական խմբակների փոխադարձ հարաբերությունները ՀամԼԿՅԵՄ տեղական կազմակերպությունների հետ համաձայնեցնելու կարգը սահմանվում է հատուկ կանոնադրությամբ, որը հրատարակվում է ՊՌԽՌ-ի և Համ. ԼԿՅԵՄ ԿԿ կողմից:

8. Կարմիր բանակի ու տորմիղի Համ. ԼԿՅԵՄ անդամները մասնակցում են Համ. ԼԿՅԵՄ հասարակական կազմակերպությունների կյանքին ու աշխատանքին (հաճախում են ընդհանուր ժողովներին, միութենական ժողովներ են անցկացնում, մասնակցում են համագումարներին և կոնֆերանսներին և այլն): ՀամԼԿՅԵՄ կոմիտեները, նախորոք զորամասի ռազմկոմի համաձայնությունը ստանալով, կարող են ՀամԼԿՅԵՄ հանձնարարություններ անել, որոնց իրագործումը չպիտի խանգարի նրանց զինվորական պարտականությունները կատարելուն:

## II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԽՆԴԻՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

9. Վաշտային և սրան համանշանակ կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակները կազմակերպվում են փոչ պակաս, քան ՀամԼԿՅԵՄ 5 անդամից բոլոր ստորաբաժանումներում (վաշտային, հեծելավաշտային և այլն), որտեղ կան ՀամԿԿ (բ) սկզբնական բջիջներ:

Ծանոթություն.—Յեթե վաշտում ՀամԼԿՅԵՄ անդամների թիվը պակաս է 5-ից պետք է տվյալ վաշտի կոմյերիտականները մտնեն մյուս վաշտի աջակցության խմբակների մեջ ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոյի ցուցումների համաձայն: Աջակցության այս խմբակի առաջադրությունների կատարումը, իր վաշտի կոմյերիտականների աշխատանքի նկատմամբ, պետք է տվյալ վաշտի կուսբջիջի անմիջական ղեկավարությամբ լինի:



10. Վաշտային կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակների մեջ են մըտնում տվյալ զորամասի ՀամԼԿՅԵՄ բոլոր անդամներն ու թեկնածուները, այդ թվում և նրանք, վորոնք միաժամանակ կուսակցության անդամ են և թեկնածու:

11. Վաշտային կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակի հիմնական խընդիրներն են.

ա) ոգնել ՀամԿԿ(բ) բջիջին՝ նրա բոլոր աշխատանքներում.

բ) աջակցության խմբակի միութենական աշխատանքի մեջ գրավել ՀամԼԿՅԵՄ բոլոր անդամներին և թեկնածուներին ակտիվ մասնակցություն ունենալու համար.

գ) կապել իր բոլոր ադամներին իրար հետ և նրանց բայլշևիկական դաստիարակության աշխատանքը կատարել (կուսակցական, քաղաքական և միութենական աշխատանքի հարցերը քննարկել միութենական ժողովներում, անդամների մեջ ընկերական կապ հաստատել, ամրացնել միութենական կար-

պաշտպանությունը, պայքարել հիվանդագին յերևույթների դեմ, անդամներին գրավել քաղգրագիտության դպրոցները, աջակցել ինքնակրթության զարգացմանը և այլն).

դ) ակտիվ մասնակցություն ունենալ կազմակերպության մեջ և վաշտում տարվելիք քաղլուսավորական ամբողջ աշխատանքի մեջ (աշխատանք լենանկյունում, պատի լրագիր գրելու, աշխատանք հասարակական, ինքնագործունեության կազմակերպությունների բջիջներում — ՄՕՊՐ-ի, ՊԱՋԸ-Ավիաքիմի և այլն).

ե) նոր անդամներ գրավել միության մեջ (մշտական շփում անկուսակցական կարմիր բանակայինների հետ, անկուսակցականների հետ անհատական և խմբական աշխատանք տանել, կազմակերպել զրույցներ, ընթերցումներ և այլն).

զ) վաշտի միութենական աշխատանքի բոլոր գործնական հարցերի քննարկումն ու լուծումը, վաշտային խմբակների և առանձին անդամների հաշվետվությունների քննարկումը իրենց աշխատանքի մասին.

է) օգնել և աջակցել պետերի կամքին բարձրացնելու զորամասերի մարտունակությունը և ամրացնելու զորամասերում զինվորական կարգապահությունը (առաջին հերթին իր սեփական շարքերում օրինակելի կարգապահություն ստեղծելով) և օգնել ու աջակցել նյութական-տնտեսական և կենցաղային պայմանների լավացնելու գործին.

ը) ամեն տեսակ աջակցություն և օգնություն ՀամԼԿԵՄ տեղական կազմակերպություններին, յերբ նրանք յերիտասարդության մեջ գործնական ռազմական պրոպագանդ մղելու լինեն, օգնություն և աջակցություն ռազմական անկյունների, հրաձգային խմբակների կազմակերպության և սարքավորման գործում՝ կոմյերիտական ակումբներում և այլն.

թ) յերկրային զորամասերի աջակցության խմբակների մշտական սերտ կապի հաստատումն ու պահպանումը համալրական ռայոնի ՀամԼԿԵՄ քաղաքացիական բջիջների հետ, նպատակ ունենալով օգնել

նրանց փոփոխիկների և զորակոչիկների ռազմա-քաղաքական դաստիարակության աշխատանքին։

12. Գնդային կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակի, բացի § § 10 և 11-ից, հիմնական խնդիրներն են.

ա) ղեկավարել վաշտային կուսակցությանն աջակցող խմբակների աշխատանքը (նրանց հետազոտությունը, լսել նախագահությունների և կազմակերպիչների հաշվետվությունները, գնդում կոմյերիտմիության աշխատանքի ընդհանուր ծրագիրը կազմել և այլն).

բ) կուսլուսավորական դպրոցների և ընկերությունների մեջ գրավել բոլոր կոմյերիտականներին, կազմակերպել և ղեկավարել ՀամԼԿՑԵՄ ագիտկոլլեկտիվներին.

գ) քննարկել և լուծել գնդում տարվելիք ընդհանուր միութենական հարցերը և միութենական աշխատանքի հարցերը.

դ) ակտիվ մասնակցություն ունենալ գնդի ակումբի աշխատանքի մեջ և հասա-



րակական կազմակերպությունների մեջ.

ե) պատգամավորներ ընտրել միութենական խորհրդակցությունների, կոնֆերանսների և համագումարների համար.

զ) զորամասերի քաղմարմինների և կուսկազմակերպությունների ցուցումների համաձայն սերտ կապ հաստատել և պահպանել ՀամԼԿՑԵՄ տեղական կոմիտեյի և արտադրական բջիջների հետ։

## III. ՎԱՇՏԱՅԻՆ ՅԵՎ ԳՆԴԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

13. Վաշտային և գնդային կուսակցությանն աջակցող խմբակների ընդհանուր ժողովները գումարվում են կանոնավոր վորոշակի կերպով սահմանված որը. վաշտայինները—ամիսը յերկու անգամ, գնդայինները ամիսը մեկ անգամ և օրինական են համարվում յեթե ներկա յեն զորամասում յեղած անդամների թվի կեսից վոչ պակաս։

14. Միութենական ժողովները, նայած թե ինչ հարցեր են շոշափվում, կարող են

լինել դռնփակ կամ դռնբաց: Դռնբաց ժողովներին, նկատի ունենալով կոմյերիտմիության ժողովրդականացումը, պետք է գրավել անկուսակցական կարմիր բանակայիններին:

15. Ժողովների օրակարգը նախօրոք նշվում է ՀամԼԿՅԵՄ գնդի խմբակի կամ գնդի բյուրոյի համապատասխան նախագահության կողմից և հայտարարվում է բոլոր անդամներին 2—3 օր առաջ մինչև ժողով նշանակված օրը:

16. Վաշտային կուսակցության աջակցող խմբակի ընդհանուր ժողովը.

ա) քննում և հաստատում է աջակցության խմբակի աշխատանքի ծրագիրը, աջակցության խմբակի նախագահության (կազմակերպիչի) իր աշխատանքի հաշվետվությունները.

բ) քննում է կոմյերիտմիության շարքերը մտնելու ցանկության մասին տրված դիմումները.

գ) ընտրում է վաշտային աջակցության



խմբակի համար նախագահություն (կազմակերպիչ).

դ) քննարկում է ընդհանուր քաղաքական և կուսակցական այնպիսի հարցեր, վորոնք առաջադրվում են վերադաս մարմինների և կոմյերիտմիության անդամների կողմից, հարցեր, վորոնք կոմյերիտականների լենինյան դաստիարակությունն են հետապնդում.

ե) քննում և հաստատում է աջակցության խմբակի գործնական աշխատանքի կապի վերաբերյալ ձևերը ՀամԼԿՅԵՄ տեղական ամրացված բջիջների հետ.

զ) լսում է կուսակցական հրամանատարների և կոմյերիտականների ու քաղղեկների տեղեկատու զեկուցումները՝ զորամասերի կյանքի ու աշխատանքի մասին և նշում է դրա հետ կապված աջակցության խմբակի խնդիրները.

է) լսում ու քննարկում է կոմյերիտականների զեկուցումները, վորոնք աշխատում են լենանկյուններում, ակումբում, հասարակա-

կան կազմակերպություններում, և միջոցառումներ է մշակում նրանց աշխատանքը հետագայում լավացնելու համար։

17. Գնդային կուսակցության աջակցող խմբակի ընդհանուր ժողովը.

ա) քննում և հաստատում է գնդում տարվելիք միութենական աշխատանքի ծրագրերը, գնդի բյուրոյի իր աշխատանքի մասին հաշվետվությունները.

բ) ընտրում է սահմանված կարգով պատգամավորներ կոմյերիտական կոնֆերանսների համար.

գ) քննարկում է ընդհանուր կուսակցական և քաղաքական կյանքի վերաբերյալ հարցերը, նույնպես և գնդում տարվելիք աշխատանքի հարցերը և մատնանշում է կուսկազմակերպության օգնելու համար միջոցառումները.

դ) լսում է գնդի կուսակցական հրամատարի, կոմիսարի տեղեկատու զեկուցումները՝ զորամասի վիճակի, կյանքի ու աշխատանքի մասին և մատնանշում է աջակ-



ցության խմբակների առաջ դրված այն խնդիրները, վորոնք ուղղված են կարմիր բանակայինների կյանքի նյութական-կենցաղային պայմանների լավացման ու մարտունակության ամրացմանը.

ե) քննում է ընդհանուր միութենական կյանքի ու աշխատանքի վերաբերյալ հարցերը, քննում է ՀամԼԿՅԵՄ կոմիտեների զեկուցումները և նրանց մասին իր վորոշումներն է կայացնում։

## IV. ՎԱՇՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

18. Ամենօրյա գործնական աշխատանքը ղեկավարելու համար վաշտային աջակցության խմբակի ընդհանուր ժողովում, յեթե խմբակում ՀամԼԿՅԵՄ անդամների թիվը 15-ից պակաս չէ, ընտրվում է նախագահություն վեց ամիս ժամանակով։ Իսկ յեթե աջակցության խմբակն ունի ՀամԼԿՅԵՄ 15 անդամից պակաս թիվ ընտրում է միայն մեկ կազմակերպիչ։

19. Նախագահությունն ընտրվում է 3

անդամի և 1–2 թեկնածուի կազմով, յերբ ՀամԼԿՅԵՄ անդամների թիվը 15-ից մինչև 50 է, իսկ յերբ ՀամԼԿՅԵՄ անդամների թիվը 50-ից ավելի յե՝ ընտրվում է 5 անդամի և 2 թեկնածուի կազմով:

20. Նախագահությունն իր և ընդհանուր ժողովի վորոշումներն ի կատար ածելու համար ընտրում է իր կազմից մեկ կազմակերպիչ, ցանկալի յե վոր սա լինի ՀամԿԿ(բ) անդամ կամ թեկնածու: Վաշտային կազմակերպիչին հաստատում է ՀամԿԿ(բ) գնդի բյուրոն, ՀամԼԿՅԵՄ գնդի բյուրոյի ներկայացնելուց հետո:

21. Աջակցության խմբակի ամենօրյա գործնական աշխատանքը ղեկավարելու համար նախագահությունը այդ աշխատանքի առանձին ճյուղերի ղեկավարության պարտականությունները բաշխում է իր անդամների և թեկնածուների միջև:

22. Նախագահության հիմնական պարտականություններն են.

ա) կիրառել աջակցության խմբակի



ընդհանուր ժողովների վորոշումները, կուսակցական և միութենական վերադաս մարմինների ու վաշտային կուսբջիջի ցուցումները և հսկել խմբակի բոլոր անդամների կողմից այդ վորոշումների իրագործման վրա.

բ) նախօրոք մշակել աջակցության խմբակի աշխատանքի նոր ծրագրերը.

գ) իր ժամանակին նախապատրաստել և աջակցության խմբակի ընդհանուր ժողովներ գումարել (նշել օրակարգի հարցերը, հայտարարել, զեկուցողներ նշանակել և այլն).

դ) ստուգել կոմյերիտականների վրա դրված միութենական պարտականությունների կատարումը, նույնպես և ղեկավարել նրանց աշխատանքը.

ե) նախօրոք քննել այն դիմումները, վորոնք արվում են կոմյերիտմիության մեջ մտնելու համար, նույնպես և քննել կոմյերիտականների գանգատները.

զ) պարբերաբար բերանացի հաշվետու լինել ՀամԼԿՅԵՄ գնդի բյուրոյի և վաշտա-

յին կուսբջիջների առաջ՝ աջակցության խմբակի վիճակի և աշխատանքի մասին.

է) կատարել ՀամԼԿՅԵՄ անդամների և թեկնածուների քանակական և որակական հաշվառումը.

Ծանոթություն.—ՀամԼԿՅԵՄ անդամների հաշվառման մասին գործերը և աջակցության խմբակների աշխատանքի գործերը պահվում են ընդհանուր կարգով կուսբջիջի գործերում:

## V. ՀԱՄԼԿՅԵՄ ԳՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆ ՅԵՎ ԳՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ.

23. Գնդային աջակցության խմբակի ամենօրյա գործնական աշխատանքը ղեկավարելու համար, խմբակի ընդհանուր ժողովում ընտրվում է ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրո վեց ամիս ժամանակով:

24. Յեթե գնդի կոլլեկտիվն ունի ՀամԼԿՅԵՄ 100-ից պակաս անդամ բյուրո յե ընտրում 7 անդամի և 2 թեկնածուների կազմով. իսկ յեթե 100 անդամից ավելի յե—9 անդամի և 3 թեկնածուի կազմով:



Ծանոթություն.—Յերկրային զորամասերում, հավաքների շրջանում ընթացուցիչ կերպով բյուրոյի մեջ են ընտրվում յերկու անդամ կոմյերիտական-փոփոխիկներից:

25. Բացի § 22-ում հիշատակվածից, ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոյի խնդիրների մեջ են մտնում.

ա) գնդային խմբակի ամենօրյա գործնական աշխատանքի ղեկավարությունը.

բ) զորամասերի քաղմարմինների և կուսկազմակերպությունների, նույնպես և գնդային միութենական ժողովների, բոլոր ցուցումների և դիրեկտիվների կատարումը.

գ) գնդային կոլլեկտիվի աշխատանքի ծրագրի նախնական մշակումը.

դ) վաշտային աջակցության խմբակների աշխատանքի ղեկավարությունը և նրանց կողմից վերադաս մարմինների բոլոր ցուցումների կատարման վրա հսկողությունը՝ նրանց աշխատանքը հետազոտելու միջոցով, վաշտային աջակցության խմբակների նա-

խախտումների հաշվետվությունները լսելու միջոցով և այլն.

ե) զորամասի ներքին կյանքի և կենցաղի հարցերի քննարկությունը, դրա հետ կապված աջակցության խմբակի առօրյա աշխատանքի համար գործնական միջոցառումների մատնանշումը.

զ) զորամասի կուս-լուսավորության, մասնավանդ միութենական գործերի, կազմակերպության մեջ ակտիվ մասնակցությունը, և բոլոր կոմյերիտականներին այդ մասնակցության մեջ գրավելը. կազմակերպության հարցերի քննարկումը և ագիտ-պրոպկոլլեկտիվի միութենական գործերը վարելու հարցերի քննարկումը և այլն.

է) ՀամԼԿՅԵՄ տեղական քաղաքացիական կազմակերպությունների հետ կապի իրականացումը:

26. ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոն իր վորոշումներն ու վճիռները կիրառելու համար, իր կազմից ընտրում ե ՀամԿԿ(բ) անդամների կամ թեկնածուների թվից, մեկ



գնդային կազմակերպիչ, վորը հաստատվում ե դիվիզիայի քաղբաժնի կողմից: ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոյի անդամներին հաստատում ե ՀամԿԿ(բ) գնդի բյուրոն:

27. Գնդային աջակցության խմբակի ամենօրյա աշխատանքի ավելի լավ ղեկավարության համար, բյուրոն միութենական աշխատանքի առանձին ճյուղերի ղեկավարությունը բաշխում ե իր անդամների մեջ, մոտավորապես հետևյալ ձևով.

ա) կազմակերպիչը—աշխատանքի բոլոր ճյուղերի ընդհանուր ղեկավարությունը, բյուրոյի անդամների ամենօրյա գործունեության համախմբումը, աշխատանքի ընթացիկ հարցերի լուծումը, վաշտային կազմակերպիչների աշխատանքների ղեկավարությունը, կապը ՀամԿԿ(բ) գնդի բյուրոյի հետ, կապը ՀամԼԿՅԵՄ տեղական կոմիտեյի հետ.

բ) բյուրոյի մեկ անդամը հանդիսանում ե ՀամԿԿ(բ) կուսլուսավորության մասի անդամի օգնականը, օգնում ե

ագիտպրոպկոլլեկտիվի գործունեյությանը, մխութենական դպրոցների և կոմյերիտականների շրջանում ինքնակրթությունը կազմակերպելուն և ղեկավարելուն․

գ) յերկրորդ անդամը—ակումբի վարչության ներկայացուցիչ․

դ) յերրորդ անդամը— աշխատանք՝ կոմյերիտմիությանը հասարակական կազմակերպությունների աշխատանքին մասնակից դարձնելու համար․

ե) չորրորդ անդամը—աշխատանք անկուսակցականների շրջանում—անհատական և խմբական աշխատանք և այլն․

զ) հինգերորդ անդամը— ՀամԼԿԵՍՄ ամրացված քաղաքացիական բջիջների հետ կապ պահպանելու համար․

է) վեցերորդ անդամը—կազմակերպչական աշխատանքի համար (մտնում է ՀամԿԿ(բ)-ին կից կազմկոմիսիայի մեջ․ աճումը կանոնավորելու հարցերը, հսկողություն կոմյերիտականների պարտականությունների կատարման վրա և այլն)․



ը) բյուրոյի մնացած անդամները և թեկնածուները, վորոնք մշտական պարտականություններ չունեն, ստանում են առաջադրություններ ընթացիկ աշխատանքի համեմատ։

28 Գնդային բյուրոն գործնական աշխատանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ գնդում կազմակերպում է, ըստ կարիքի, բյուրոյի ընդլայնած նիստեր վաշտային կազմակերպիչների հետ միասին։

29․ Ակտիվ աշխատողներին դաստիարակելու համար և կոմյերիտմիության կազմակերպության աշխատանքի կարևորագույն հարցերի նախապես գործնական քննարկության համար, բյուրոն պարբերաբար, որինակ 2 ամիսը մեկ անգամ, զորամասի կոմյերիտական ակտիվին խորհրդակցության է հրավիրում (բյուրոյի, նախագահությունների անդամներին և մյուս կոմյերիտականներին, վորոնք ակտիվ աշխատանք են տանում զորամասում)։

## VI· ՀԱՄԼԿՅԵՄ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԸ

30. Կարմիր բանակի և տորմիղի կոմյերիտմիութենական կոնֆերանսները գումարվում են համապատասխան քաղբաժինների կողմից դիվիզիայի և շրջանի (օկրուգ) մասշտաբով տարին մեկ անգամ:

Ծանոթություն.—Շրջանային (օկրուգի) քաղվարչության թույլտվությամբ կարող են գումարվել կայազորական և ճամբարային ՀամԼԿՅԵՄ կոնֆերանսներ:

31. ՀամԼԿՅԵՄ կոնֆերանսների գումարման ժամանակը սահմանվում է համապատասխան քաղբաժինների կողմից և հաստատվում է՝ դիվիզիական կոնֆերանսների համար—շրջանային քաղվարչությունների կողմից, շրջանայինի համար—ՊՈՒՌ–ի կողմից:

32. Կոնֆերանսների ներկայացուցչության նորմաները վորոշվում են համապատասխան քաղբաժինների կողմից, ընդ վորում անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր կոն-



ֆերանսների կազմը մեծածավալ չլինի, իսկ նրա աշխատանքը ունենա գործնական բնույթ:

33. Վորպես կանոն դիվիզիական կոնֆերանսների պատգամավորների ընտրությունները կատարվում են վաշտային աջակցության խմբակների ընդհանուր ժողովներում, սակայն նայած տեղական ինչ պայմաններ գոյություն ունեն, քաղբաժնի ցուցմամբ կարող են կատարվել նաև գնդային աջակցության խմբակների ընդհանուր ժողովներում:

34. Շրջանային կոնֆերանսների համար պատգամավորների ընտրությունները կատարվում են գնդային աջակցության խմբակների ընդհանուր ժողովներում կամ դիվիզիական կոնֆերանսներում, յեթե վերջիններս գումարվում են շրջանային կոնֆերանսներից առաջ:

35. Դիվիզիական և շրջանային կոնֆերանսները լսում և քննարկում են համապատասխան քաղբաժնի կամ շրջանային քաղ-

վարչության զեկուցումը զորամասերի քաղլուսավորական աշխատանքի դրության և խնդիրների մասին, քննարկում են Համ. ԼԿՅԵՄ համապատասխան կոմիտեյի զեկուցումը, քննարկում են կոմյերիտմիության աշխատանքի հարցերն ամբողջությամբ վերցրած և ՀամԼԿՅԵՄ ռազմական աշխատանքի հարցերը:

36. Քաղմարմինները ակտիվ մասնակցության մեջ են գրավում ՀամԼԿՅԵՄ տեղական կոմիտեներին՝ կոնֆերանսները նախապատրաստելու և անցկացնելու համար:

37. ՀամԼԿՅԵՄ կոնֆերանսների վորոշումները անպայմանորեն պետք է հաստատվեն.— դիվիզիականինը— քաղբաժինների կողմից, շրջանային կոնֆերանսի վորոշումները՝ շրջանային քաղվարչության կողմից և միայն նրանց հաստատելուց հետո կարելի յե ընդունել վորպես ղեկավար մատերյալ և կարելի յե կիրառել:

38. Նախքան կոնֆերանսների գումարումը կոմյերիտական աջակցության խըմ-



բակներում պետք է լայն նախապատրաստական աշխատանք տանել կոմյերիտմիության ակտիվի և աջակցության խմբակների ժողովներում որակարգի կարևորագույն հարցերի քննարկության միջոցով և, աշխատանքի փորձը հիմք ընդունելով, այդ ժողովներում գործնական առաջարկություններ անել կոնֆերանսին:

## VII. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՔԱՂԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

39. Վաշտային և գնդային աջակցության խմբակները աշխատանքը կատարում են ՀամԿԿ(բ) վաշտային բջիջի և գնդային բյուրոյի համապատասխան նախագահության (քարտուղարի) անմիջական ղեկավարությամբ: Դրա հետ միասին կուսղեկավարությունն այնպես պետք է դրված լինի, վոր աջակցության խմբակներում ապահովված լինի կոմյերիտականների ինքնագործունեյությունն ու ակտիվությունը:

40. կոմյերիտականներին բոլշևիկական դաստիարակություն տալու համար քաղ-

կազմակերպությունները պետք է աջակցության խմբակներին կուսակցական ու քաղաքական կյանքի և խորհրդային իշխ. քաղաքականության հարցերի քննարկությանը մասնակից դարձնեն՝ այդ հարցերը միութենական ժողովներում, ակտիվի խորհըրդակցություններում դնելու և կոմյերիտականներին կուսժողովներին հրավիրելու միջոցով:

11. Կոմյերիտական աջակցության խմբակների կուսակցական ղեկավարության հիմնական ձևերն են՝.

ա) ՀամԼԿՅԵՄ նախագահությունների և բյուրոյի հաշվետվությունները, նույնպես և գործնական աշխատանքի կարևորագույն հարցերի դնելը ՀամԿԿ(բ) կուսբջիջների նախագահությունների, գնդային բյուրոյի նիստերին ու ընդհանուր կուսժողովներին. այդ հարցերի վերաբերյալ կոնկրետ ցուցումներ կայացնելը՝ աջակցության խմբակների աշխատանքի մասին, և



կուսբջիջների համար կոնկրետ խնդիրներ դնելը.

բ) ՀամԿԿ(բ) գնդային բյուրոյի և վաշտային բջիջի քարտուղարի անձնական կապը կազմակերպիչների հետ և նրանց համապատասխան ցուցումներ տալը.

գ) մշտական ներկայացուցիչ նշանակել ՀամԿԿ(բ) գնդային բյուրոյից ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոյի համար՝ ՀամԼԿՅԵՄ բյուրոյի ընթացիկ աշխատանքը կուսկազմակերպությունների միջոցառումների հետ կապելու համար.

Ծանոթություն.—Եթե ՀամԼԿՅԵՄ գնդային կազմակերպիչը միաժամանակ ՀամԿԿ(բ) բյուրոյի անդամ է, բայց նրանից ներկայացուցիչ չի նշանակվում.

դ) կոմյերիտականներին կազմակերպելը և նրանց քաղաքական լուսավորական անմիջական ղեկավարությունը (քաղղեկոցների կազմակերպումը, ղեկավարների ջոկելը և այլն).

ե) աշխատանքի ծրագրերի, նույնպես և ՀամԼԿՑԵՄ նախագահությունների, գնդային բյուրոյի և ընդհանուր ժողովների կարևորագույն վորոշումների հաստատումը ՀամԿԿ(բ) համապատասխան վաշտային բջիջների կամ գնդային բյուրոյի կողմից․

գ) ՀամԼԿՑԵՄ կազմակերպիչների և անհատ ակտիվիստներին համապատասխան կուսակցական խորհրդակցություններին գըրավելը․

է) կոմյերիտմիության կուսկորիզի միջոցով աջակցության խմբակների ամբողջ աշխատանքի վրա ազդեցություն ունենալը․

42․ Բ․ Գ․ Կ․ Բ․ ՀամԼԿՑԵՄ անդամների կուսակցության մեջ ընդունելության հարցերը վճռվում են ընդհանուր կարգով։ ՀամԼԿՑԵՄ գնդային բյուրոյի յերաշխավորությունը հավասարվում է ՀամԼԿՑԵՄ տեղական կոմիտեյի յերաշխավորության։



## VIII․ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՊԸ ՀԱՄԼԿՑԵՄ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ․

43․ ՀամԼԿՑԵՄ տեղական կազմակերպությունների հետ գործոն կապ հաստատելու համար քաղմարմինների, բանակային կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների ներկայացուցիչները (հրահանգիչներն ու ՀամԼԿՑԵՄ կազմակերպիչները) մտնում են ՀամԼԿՑԵՄ համապատասխան կոմիտեների մեջ։ Կարմիր բանակի և տորմիղի ՀամԼԿՑԵՄ անդամները կարող են ընտրվել միութենական կազմակերպության մեջ, բայց վոչ մշտական աշխատանքի համար։

44․ ՀամԼԿՑԵՄ տեղական կոմիտեները զորամասերին և քաղմարմիններին հայթայթում են կոմյերիտական գրականություն, ամսագրեր, թերթեր, ընթացիկ աշխատանքի վերաբերյալ ղեկավար մատերյալ։

45․ Աշխատանքի փորձն իրար հետ փոխանակելու, ուժերն ու միջոցները փոխադարձաբար ոգտագործելու համար կոմյե-

րիտական կուսակցության աջակցող խմբակները քաղմարմինների և ՀամԼԿՅԵՄ տեղական կոմիտեի ցուցումի համեմատ անմիջական կապ են հաստատում Համ. ԼԿՅԵՄ քաղաքացիական բջիջների (գլխավորապես արտադրական բջիջների) հետ և պատանի պիոներների կազմակերպությունների հետ:

46. Կարմիր բանակի և տորմիղի Համ. ԼԿՅԵՄ բոլոր անդամներն ու թեկնածուները հաշվի յեն առնվում համապատասխան զորամասերի և քաղմարմինների կուսկազմակերպություններում: ՀամԼԿՅԵՄ տեղական կոմիտեները բացառապես կոմյերիտականների ընդհանուր հաշիվն են պահում կուսկազմակերպությունների և քաղմարմինների տվյալների համեմատ:

## IX. ՀամԼԿՅԵՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎՏԱՐՈՒՄԸ.

47. ՀամԼԿՅԵՄ մեջ մտնելու մասին տրված դիմումների, նույնպես և Համ. ԼԿՅԵՄ անդամների, վորոնք ՀամԿԿ(բ) անդամ կամ թեկնածու չեն, բոլոր զանցանքների քննությունն ու վորոշումը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ. վաշտային աջակցության խմբակի նախագահության վորոշումը ներկայացվում է վաշտային խմբակի ընդհանուր ժողովին, վաշտային խմբակի ընդհանուր ժողովի վորոշումը ներկայացվում է ՀամԼԿՅԵՄ գընդային բյուրոյին և վերջնականապես հաստատվում են ՀամԿԿ(բ) գնդի բյուրոյի կողմից, իսկ առանձին վաշտերում, գումարտակներում և այլն,—աջակցության խմբակների վորոշումը հաստատում է Համ. ԿԿ(բ) բջիջի նախագահությունը:

48. Միությունից վտարված Համ. ԼԿՅԵՄ անդամների և թեկնածուների բողոքների քննությունն ու վորոշում կայացնելը դրվում է կուսկոմիսիայի վրա և կատարվում է հետևյալ հաջորդականությամբ. դիվկուսհանձնաժողով, շրջանային (օկրուգի) կուսհանձնաժողով, ՊՈՒՌ-ի ՎՀ և ՀամԼԿՅԵՄ ԿԿ: Բողոքների գործերը կուսկոմիսիայում քննելու ժամանակ ներկա յե լինում Համ. ԼԿՅԵՄ համապատասխան կո-

միուեյի ներկայացուցիչը վճռական ձայնի իրավունքով։

49. Անդամատոմսեր և թեկնածուների քարտեր տալու կարգը վորոշվում է հատուկ հրահանգով, վորը հրատարակում է ՊՈՒՌ-ը և ՀամԼԿՅԵՄ ԿԿ։

## X. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐ.

50. Կարմիր բանակի ՀամԼԿՅԵՄ անդամներն ու թեկնածուները անդամավճարից չեն ազատվում և վճարները մուծում են ՀամԼԿՅԵՄ ԿԿ անդամավճարներ գանձելու կարգի մասին յեղած կանոնադրության հիման վրա։

51. Կարմիր բանակի ՀամԼԿՅԵՄ այն անդամները, վորոնք միաժամանակ անդամ կամ թեկնածու յեն ՀամԿԿ(բ), անդամավճար են տալիս միայն կուսակցության գծով։

52. Աջակցության խմբակների հաշվետվությունն ու գործավարությունը տարվում է ՊՈՒՌ-ի հրատարակած հատուկ կանոնադրության հիման վրա։

Գրառեպգլխվար 1489 բ. Պատ. № 902 Տիրաժ. 2000

143

Ձրի

Инструкция ячейкам ВКП (б)
и
Положение о работе ВЛКСМ
в Красной Армии.

ՀՀ Ազգային գրադարան
NL0187230